



Տարի: 2016
Թիվ: 3

Պարզ Դասեր



ՍԱՀՄԱՆՆԵՐՆԵՐԻ ՍՈՒՆԵԱՆ

Dosya Konusu

Yazı Atölyesi

Külür Sanat

Bilim Köşesi

Dünya Mutfakları

Spor Etkinlikleri

Dosya Konusu: KURULUŞUMUZUN 50. YILINI KUTLUYORUZ
ՀԱՆՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԱՌԻՔԸ: ԿԸ ՏՕՆԵՆՔ ՄԱՀԱԿԵԱՆ-ՆՈՒՆԵԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50Դ ՏԱՐԵՂԱՐՁԸ

Պարզ Մատիտ

Դպրոցական Հանդես

Յանուն Սահակեան Նունեան

Լիսէի Բաժնի Պատասխանատու՝

Տնօրէնուհի Օր. Թալին Մաթոսօղլու

Հրատարակութեան Պատասխանատու

Միրուն Էօզչէլիք

Գրական Բաժնի Պատասխանատու Խմբակ

Վարուժան Արզումանեան

Հռիփսիմէ Մէլտան

Միւզան Աչքք

Սաատէթ Մէլիան Երլմազ

Միրուն Էօզչէլիք

Նատին Տէմիրճի

Էրլին Օհանեան

Պատասխանատու Աշակերտաց Կազմ

Դալար Ճամկէօզօղլու

Երազ Չաղլաեան

Նատին Ակոբեան

Միրունիկ Վարդանօղլու

Տարփին Մըխճըօղլու

Նորա Պալճը

Քէվրն Էօզչիմշէք

Գլոտիա Իւլքարտէշ

Կայանէ Ճապարթօղլու

Ալպէր Սան

Շիրակ Միսնար

2016, Թիւ 3

Baskı

Çiğ Matbaası

Cağaloğlu Yokuşu 11/A

Cağaloğlu-Fatih/İSTANBUL

Tasarım ve Dizgi

Çiğ Matbaası

Barz Madid

Okul Dergisi

Özel Sahakyan Nunyan Ermeni Lisesi

Adına İmtiyaz Sahibi

Okul Müdürü Talin Matosoğlu

Yazı İşleri ve Yayın Kurulu

Sirun Özçelik

Tashih Kurulu

Varujan Arzumanyan

Hripsime Meydan

Saadet Seyhan Yılmaz

Sirun Özçelik

Nadin Demirci

Erlin Ohanyan

Barz Madid Dergisi Öğrenci Grubu

Talar Camgözoğlu

Yeraz Çağlayan

Nadin Agopyan

Sirunik Vartanoğlu

Darpin Mıhcıoğlu

Nora Balcı

Kevın Özşimşek

Klodya Üçkardeş

Gayane Cabatoğlu

Alber San

Şirag Misnar

2016, Sayı 3

Dergi İletişim Adresi

Özel Sahakyan Nunyan Lisesi

Marmara Cad. No:47-1

34098, Fatih-İstanbul

Tel: (0212) 585 53 15

Fax: (0212) 632 08 87

www.sahakyan-nunyan.k12.tr

sahakyanermenils@hotmail.com

ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ/İÇİNDEKİLER

ՀԱՆԴԵՍԻ ՄԱՅՐ ՆԻԻԹԸ: ԿԸ ՏՕՆԵՆՔ ՄԱՀԱԿԵԱՆ-ՆՈՒՆԵԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50ԱՄԵԱԿԸ DOSYA KONUSU: KURULUMUZUN 50. YILINI KUTLUYORUZ

Վարժարանիս Հիմնադրության 50րդ Տարեդարձի Տոնակատարություններին-
Կարպիս Ճանկիկեանի Երկոյ
Պատմական Սահակեան Նունեան Վարժարանի
Կարպիս Ճանճիկեան
Basında 50.Yıl Kutlamaları

ԳՐՈՂՆԵՐ/ YAZI ATÖLYESİ

Միջլիսեական Պատմուածքի Մրցում/Liselerarası Hikaye Yarışması
Yazı Yazarken/Yeraz Çağlayan
İçimizdeki Neşe/Sirunik Jbit Vartanoğlu
Günlük/Darpin Mihcioğlu
Mutluluk/Talar Camgözoğlu
Hayat Üzerine/Talar Camgözoğlu
10.05.2015/Nadin Agopyan
Şiirin Adabı/Nadin Agopyan

ԳԻՏՈՒԹԻՒՆ/BİLİM

Aziz Sancar 2015 Nobel Kimya Ödülü'nü Kazandı
4 Yeni Element Doğrulandı
Kütleçekim Dalgaları İlk Kez Gözlendi
Non-Newtonian Akışkanlar

ՄՇԱԿՈՅԹ-ԱՐՈՒԵՍ / KÜLTÜR-SANAT

Օրէ Օր/Aret Gıcır
Պարի Պետական/Barı Bedagan
2016 Oscar Ödülleri
Yitik Kuşlar
SAR/Çıplak Ayaklar Kumpanyası Sahakyan'da
5.Kristin Saleri Resim Yarışması
Akıl Oyunları Yarışması

ՄԱՐԶԱՆՔ/SPOR

50.Yıl Keğam Esayan Atletizm Şenliği
Basketbol ve Voleybol Yarışması

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑ/DÜNYA MUTFAKLARI

Նարինզով Կարնու/Portakallı Kereviz

ՄՏԱՅԻՆ ԽԱՂԵՐ/AKIL OYUNLARI

ՄԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՔԱՅԼԵՐԳ

Սահակեան Սան բարեբաստիկ
Մէկ սիրտ ու հոգի մեծ ու պզտիկ
Ազնիւ փառքով,մաքուր վարքով
Քոյր եղբայրներ ենք քովէ քով:

.....

Պատիւ յարկին որ մեր վրայ
Զուակի պէս կը գուրգուրայ
Եւ շնորհաց Սուրբ Կաթոճիս է ոյժ
Կը ջամբէ մեզ նոր կեանք նոր ոյժ:

.....

Սահակեան Սան Տոհմին համար
Պէտք է ըլլալ զաւակ տիպար,
Ազնիւ միշտ ժիր յառաջադէմ
Նշանաբանն է իր վսեմ:

.....

Պատիւ անոնց որք անձնուէր
Կրթութեան ջանք չեն խնայեր
Պատիւ, պատիւ անոնց յաւէտ
Ուխտենք ըլլալ երախտագէտ:





2016 ը դպրոցիս համար եղաւ ամոռանալի տարի մը: Այս շրջանին տօնեցինք վարժարանիս 50ամեակը եւ սոյն ձեռնարկին թափ պիտի տրուի նաեւ պանազան շարժումներով:

Փափաքեցանք «Պարզ Մատիտ» անուն հանդէսին երրորդ թիւը նուիրել վարժարանիս 50ամեակին եւ բաժնել մեր երջանկութիւնը բոլոր Սահակեան Նունեան ընտանիքով:

Կը շնորհաւորեմ բոլոր ուսուցիչներն ու աշակերտներս, որոնք աշխատեցան յօժարակաժ եւ սիրողական ոգիով սոյն թերթը պատրաստելու համար: Կը մաղթեմ եւ կը ցանկամ որ «Պարզ Մատիտ» ը ճամբայ բանայ երիտասարդ գրիչներուն եւ ընծայէ այն առիթը մեր հարուստ գրականութեան նորանոր ամդամներ հասցնելու:

Բարի տարեշրջան

Թային Մաթոսօղլու

Տնօրէնուհի՝

Սահակեան Նունեան Լիսէի





DOSYA KONUSU: 50. YIL KUTLAMALARI

ՍԱՀԱԿԵԱՆ ՈՒՆԵԱՆ

Վարժարանիս Հիմնադրութեան 50րդ Տարեդարձի Տօնակատարութիւն- Կարպիս Ճանճիկեանի Երեկոյ

18 Մարտ Ուրբաթ օր ժամը 20.00ին Մամաթիոյ Հրաչեայ Աճառեան Մրահին մէջ տեղի ունեցաւ Սահակեան-Նունեան լիսէի 50րդ տարեդարձի բացման հանդիսութիւնը:

Սահակեան-Նունեանի սասներէն բանաստեղծ Կարպիս Ճանճիկեանի ձօնուած այս գիշերուան բացումը կատարեց վարժարանիս տնօրէնուհի Օր. Թալին Մաթոսօղլու: Ան շեշտեց թէ որքան որ վարժարանս 50 տարուան լիսէ մըն է, բայց և այնպէս վարժարանիս արմատները կ'երկարին մինչև 15րդ դար: Այս առթիւ ցուցադրուեցաւ տեսերիզ մը, վարժարանիս պատմականին վերաբերեալ:

Օրուան հանդիսավարն էր վարժարանիս ուսուցչուհիներէն Տկն. Անի Տէլիմէլքոնօղլուն:

Յայտագրին երկրորդ բաժնին մէջ կարդացուեցան Ճանճիկեանի բանաստեղծութիւններէն ընտրեալ նմոյշներ: Սոյն աշխատութեան իրենց բաժինը բերին նաև Սահակեան Նունեան երգչախումբը Մեւան Ակօշեանի մականին ներքեւ: Ակօշեան, Ճանճիկեանի քերթուածներէն 3 հատը ձայնաւորելով ներկայացուց ժողովուրդին:

Հանդիսութեան վերջին բաժնին յանուն Մարմարայի, մաս կազմեց Օր.

Մաքրուհի Պ. Յակոբեան, որովհետեւ այն օրը Մարմարա Օրաթերթի՝ խմբագրապետ Պր. Ռոպէր Հատտեճեան իր անակնկլօրէն անհանգստանալուն պատճառաւ բացակայած էր:

Վարժարանիս պատմութեան մէջ կարեւոր դեր կատարած բարերար Յակոբեան գերդաստանի անդամ՝ Զապէլ Յակոբեան Պիլքեր, ինչպէս նաև Ճանճիկեանի զարմիկը՝ Պարոն Բարսեղ Ճանճիկեան ալ մասնակցեցան սոյն հանդիսութեան:

Տէր Սահակ Արք. Մաշալեանի հուսկ բանքով հասաւ վերջ գտաւ այս երեկոն:

Հրաւիրեալներուն մեկնումէն առաջ, անոնց նուիրուեցան Արասի կողմէ հրատարակուած Ճանճիկեանի գոյգ "Արաս" գիրքերը:





ՍԱՀԱԿԵԱՆ ՍՈՒՆԵԱՆ



Պատմական Սահակեան Լուսնեան Վարժարանի

Իսթանպուլի գրաւումէն ութը տարի վերջ՝ 1461-ին Ֆաթիհ Սուլթան Մեհմետ Պուրսայի առաջնորդ Յովակիմ Եպիսկոպոսը մասնաւոր հրովարտակով մը անուանեց՝ Պատրիարք Թուրքիոյ Հայոց եւ մասնաւոր հանդիսութեամբ մը յանձնեց Պատրիարքական «ասա» ն եւ շնորհեց անոր բոլոր իշխանութիւններն ու իրաւասութիւնները:

Այսպէսով Սամաթիոյ Ս. Գեորգ Եկեղեցին եղաւ թրքահայութեան առաջին աթոռանիստ մայր եկեղեցին մինչեւ 1641 :

Յովակիմ Եպիսկոպոս՝ Պուրսացի Առաջին Պատրիարքը Թուրքիոյ Հայոց, հաստատեց իր Պատրիարքարանը Սամաթիոյ մէջ, Ս. Կոյս Մարիամի անուան նուիրուած եւ Բերիպլէբոս



կոչուած Բիզանդական վանքին մէջ, որ շատ անշքացած, քանդուած եւ աւերուած վիճակի մէջ կը գտնուէր այդ շրջանին:

Այսօրուան Ս. Գեորգ Եկեղեցոյ շրջափակին մէջ հաստատուեցաւ նաեւ դպրատուն մը որ հիմը կազմեց Սահակեան Վարժարանին : Այս առաջին Պոլսոյ ազգային դպրատունին մէջ, նորընտիր Պատրիարք Սրբազանին կողքին դասախօսեցին իրեն հետ Պուրսայէն Իսթանպուլ եկած կղերականներ, դպիրներ եւ ուսեալ անձեր: Աւելի յետոյ, վարժարանը հետզհետէ բարգաւաճեցաւ եւ ունեցաւ ժամանակի մեծագոյն մտքերը իբրեւ դաստիարակ: Ասոնց կարգին հարկ է յիշել մանաւանդ Ամիրտովլաթ Ամասիացի (1416-1496) մեծանուն արքունի բժշկապետը, 15րդ դարու նշանաւոր գիտնականը, որ իր մայրենիէն զատ հմուտ էր հինգ օտար լեզուներու՝ թրքերէն, պարսկերէն, արաբերէն, յունարէն եւ լատիներէնի:

Ամիրտովլաթի «Օգուտ Բժշկութեան» անուն գլուխ գործոցը, դասական երկ համարուեցաւ թէ իր ժամանակին եւ թէ իր յաջորդներուն

կողմէ: Ամիրտովլաթ գիտունը, իր «Անգիտակ Անպետ» (բժշկական բառարան), «Ախրապատին» (դեղագործութիւն), եւ «Գիրք Ռամկական» գործերէն զատ երկար տարիներ դասաւանդեց նաեւ այս վարժարանին մէջ զայն վերածելու համար իր ժամանակի բարձրագոյն ուսումնական հաստատութեան:

1831 Թուականին հիմնուեցաւ նաեւ առաջին աղջկանց վարժարանը «Լուսնեան» անունով:

Սահակեան վարժարանը, որ զանազան թուականներու տեղի ունեցող մեծ հրդեհներու պատճառաւ երբեմն մասամբ, երբեմն ալ ամբողջութեամբ հրկիզուած էր, 1866-ին պատահած ահռելի հրդեհին ամբողջութեամբ կորսուեցաւ: Լուսնեան աղջկանց վարժարանին հետ միասին: Այս հրդեհին այրեցան եւ ոչնչացան նաեւ Ս.Գեորգ եկեղեցին եւ թաղին մէջ հայերու պատկանող բազմաթիւ տուներ եւ խանութներ :



Սրբեցան եր. վիճակը Ասահակեանի

Նունեան աղջկանց վարժարանը վերստին կառուցուեցաւ 1872 թուականին Սամաթիոյ Թաղեցի Գասպար Խաչատուրեան Կիւմիւշճեանցիի կողմէ,



որուն Տիկնոջ՝ Վարդուհիի անունն ալ աւելնալով , վարժարանը կոչուեցաւ «Նունեան-Վարդուհեան» : 1872 Մայիս 1-ին վարժարանին շինութիւնը աւարտելէ եւ բացումը կատարուելէ յետոյ մեռաւ Կիւմիւշճի Գասպար Խաչատուրեան: Իր որդին Միքայէլ Գասպար Կիւմիւշճեան կառուցանել տուաւ իր ջանքերով եւ ժողովրդին մեծ նուէրներով՝ «Սահակեան» մանչերու վարժարանը , յար եւ նման «Նունեան-Վարդուհեան» վարժարանին: Իր հօրմէն ճիշդ երեք ամիս յետոյ մեռաւ նաեւ 24ամեայ Միքայէլ Գասպար

Խաչատուրեան Կիւմիւշճեան : Երկուքին ալ մարմինները կը հանգչին քով քովի փառաւոր դամբարաններու մէջ Ս.Գեորգ Եկեղեցոյ ետին վարժարանի պարտեզին մէջ:

Այս շրջաններուն եւ անոնց յաջորդող ժամանակամիջոցին, պէտք է յիշատակել որ «Սահակեան» եւ «Նունեան-Վարդուհեան» վարժարանները բոլորած են շատ յառաջադէմ եւ նախանձելի շրջան մը՝ ունենալով իրենց իմաստուն եւ գործունէ վարիչներուն արընթեր ընտրուած եւ գիտակից անձերէ կազմուած ուսուցչական կազմ մը: Սամաթիոյ Սանուց Ընկերութիւնը եւս որ



TARİHÇE



հաստատուած է 1842-ին եւ վաւերացուած՝ Կեդրոնական Ուսումնական Խորհրդոյ կողմէ 1884-ին՝ մեծ դեր է ունեցած վարժարանի վերելքին մէջ: Լաւագոյն ուսուցիչներ հրաւիրուած են դասախօսելու եւ որակաւոր սերունդ մը սկսած է պատրաստուիլ անոնց ձեռքին տակ:

1894 Յունիս 24-ին տեղի ունեցաւ Իսթանպուլի մեծ երկրաշարժը, ուրկէ բազմաթիւ փաստուած շէնքերու կարգին փաստուեցան նաեւ «Սահակեան» և «Նունեան-Վարդուհեան» վարժարանները եւ Ս.Գեորգ Եկեղեցին: 17-18 Ապրիլ 1895-ին դարձեալ Սամաթիոյ մէջ աղիտալի հրդեհ մը պատահեցաւ, որու փրօցին բազմաթիւ ընտանիքներ բացը մնացին : Միքայէլ Է.Ֆ. Յակոբեան թէ Ս.Գեորգ Եկեղեցւոյ վերաշինութեան համար բերած է մեծ օժանդակութիւն եւ թէ սատարած է Սամաթիոյ թաղին երկրաշարժէն եւ հրդեհէն փաստուած ընտանիքներուն: Յետ մահու կը հանգչի Ս.Գեորգ Եկեղեցւոյ պարտեզին մէջ:

Իր որդին՝ Գրիգոր Յակոբեան, կատարելով իր բարեսիրտ հօր վերջին կամքը, շինել տուաւ Եկեղեցւոյ մուտքի դուռը, շուրջի խանութները, բանկայի եւ խորհրդարանի մասը եւ վերի յարկի հիւրանոցը եւ այլ բաժանութները՝ ճարտարապետութեամբն՝ Աւետիս եւ Գրիգոր Մարաֆեան եղբայրներու:

Ա.Աշխարհամարտին (1915) Եկեղեցին եւ գոյգ վարժարանները զինուորական զինուարական իշխանութեան կողմէ:

Թաղային խորհուրդը ստիպուեցաւ իր նիստերը գումարել մօտակայ սրճարանի մը մէջ: Վարժարանի աշակերտութիւնն ալ միջոց մը մասամբ հիւրանոցի եւ մասամբ ալ վարձուած տուներու փոխադրուեցաւ: Եկեղեցական արարողութիւններն ալ բոլորովին դադարած ըլլալով յուղարկաւորութեան եւ այլ արարողութիւնները սկսան կատարուիլ Ալթը Մերմէրի Գլխադիր Ս.Յակոբ Եկեղեցին:

1918 Յուլիսին պատերազմի վերջաւորութեան մօտ Եկեղեցին եւ վարժարանները վերադարձուեցան սակայն շէնքերը շատ փաստուած գրեթէ ամբողջութեամբ փճացած եւ քանդուած վիճակի մէջ էին:

Այս շրջանին է որ հետզհետէ գաւառներէ Իսթանպուլ սկսան հասնիլ հոս հոն մնացած ողբալի վիճակի մէջ հայեր:

Հայ ընտանիքներ, շոգենաւներով խումբ խումբ եկան Հայտարփաշայէն ու հաստատուեցան Նունեան Վարդուհեան աղջկանց վարժարանին մէջ: Տարիներ տեւեց անոնց բնակութիւնը այդ վարժարանին մէջ, գոր երկար ժամանակ կոչուեցաւ՝ «Գաղթակայան»: Իսկ Սահակեան վարժարանը շարունակեց իր ուսման, բայց նեղ պայմաններու ներքեւ:

Այդ միջոցին իրերայաջորդ քաղաքապետական տեղեկագրեր առողջապահական տեսակէտով փասակար կը դատէին գաղթականներու վարժարանին մէջ բնակութիւնը և կը պահանջէին փակել այդ կայանը: Հազարաւոր դժուարութիւններով, անձնական ու պաշտօնական դիմումներով Սամաթիացին յաջողեցաւ տարիներ երկարել



այս հիւրընկալութիւնը, որուն շնորհիւ ժամանակով ինքնաբաւ դարձան գաղթականները և յաջողեցան տեղաւորուիլ թաղին զանազան վայրերը: Արդար ըլլալու համար հոս պէտք է շեշտել թէ անոնք այս սիրոյն արժանի դարձան իրենց աշխատասիրութեամբ և թաղին բերած երախտագէտ նուիրումով:

1924-ին Կրթական Գործավարութիւնը բոլոր փոքրամասնութեանց վարժարաններու համար պատասխանատու հիմնադիրներու (kurucu) ընտրութիւնը պահանջեց և Թաղային Խորհուրդը վարժարանին համար հիմնադիր նշանակեց իր ատենադպիր Տօթթ. Գ. Գըրըքճեանը և այսպէսով ան եղաւ առաջին հիմնադիրը «Սահակեան-Նունեան» վարժարանին:

Նոյն տարին կրթական նոր ծրագրով, «Սահակեան»ը դարձաւ երկսեռ վարժարան: «Նունեան-Վարդուհեան» վարժարանի շէնքը 1940-ական թուականներուն անգամ մը եւս այրեցաւ եւ տարիներ շարունակ այդպէս մնաց: Գրեթէ 20 տարի յետոյ է որ 1962-ին Տրթ. Գեորգ Գեորգեանի ատենապետած եւ Փարսուն Կեօքպաշի, Տրթ. Զաւէն Մէնգիլճեանի, Մակար Պահարի, Յարութիւն Եաբուրթի, Յակոբ Գարայեանի եւ Յակոբ Ֆերահճեանի մաս կազմած թաղային խորհուրդին կողմէ նորաշինութեան յանձնախումբը կազմուեցաւ:

Վարժարանի շինութեան յատկազգիծը պատրաստած է բարձր ճարտարապետ Ստեփան Արա Արաթան, իսկ իր օգնականը եղած է ճարտարագէտ Յարութիւն Մուրատօղլուն:

Այս նորոգութեան յատկանշական մասն էր թաղեցիներուն շէնքին կառուցման հանդէպ ցոյց տուած մօտիկ հետաքրքրութիւնը, օգնութիւնն ու մասնակցութիւնը:

Այս շինութիւնը արագօրէն իր վերջակէտին հասաւ շնորհիւ նորընտիր թաղային խորհուրդոյ անդամներուն:

Վերաշինութեան գումարին մեծ մասը նուիրեց Կիւլպէնկեան հաստատութիւնը:

Բացման Հանդիսութեան ներկայ էին երջանկայիշատակ Շնորք Պատրիարք Գալուստեան, Կիւլպէնկեան հաստատութեան ներկայացուցիչ՝ Բօրթուկալի հիւպատոս Ժագ Ապրաւանէլ, Նորընտիր տնօրէնուհի՝ Տիկին Վերժին Տեօշմէճեան, Թաղային Խորհուրդոյ անդամներ եւ թաղեցիներ:

1960-ին միջնակարգը, իսկ 1966-ին բացուեցան Լիկէնի բաժինները, որոնք ծառայեցան բարձր ուսում ջամբել ո՛չ միայն Սամաթիոյ թաղեցիներուն, այլ նաեւ համայն Իսթանպուլահայութեան:

ԿԱՐՊԻՍ ՃԱՆՃԻԿԵԱՆ (1920-1946)

Ծնած է Իսթանպուլ, Սամաթիա: Իր նախնական ուսումը ստացած է թաղին Սահակեան-Նունեան վարժարանը:

Իր առաջին քերթուածները հրատարակուած են՝ Բագարատ Թեւեանի «Պատկեր»ին մէջ, 1939-ին «Արաքսի Սողոմոն» ծածկանունով: Աւելի վերջ աշխատակցած է շրջանի բոլոր թերթերուն:

1942-ին Հայկազուն Գալուստեանի հետ հրատարակած են «Պալքըս» անուն բանաստեղծական հատոր մը թրքերէնով:

Կ. Ճանճիկեան Իսթանպուլահայ գրականութեան մէջ առաջինը եղած է այն քերթողներուն, որոնք ուզած են նոր շունչ մը եւ նոր ձեւ մը բերել բանաստեղծութեան:

Իր քերթուածները, մահէն վերջ լոյս տեսած են «Օրէ Օր» անուն գրքի մը մէջ:

Իսկ 1990-ին Սահակեան Մանուց Միութեան հրատարակչականէն Ռուբէն Մաշոյեանի խմբագրութեամբ հրատարակուեցաւ «Կարպիս Ճանճիկեանի Հետքերով» անուն հատորը՝ պարունակելով հեղինակին նախապէս լոյս տեսած թէ՛ անտիպ բանաստեղծութիւններն եւ թէ՛ արձակի փորձերը: Նոյնութեամբ 2016ին այս գիրքի թրքերէն եւ հայերէն օրինակները տպուեցան Արաս Հրատարակչութեան կողմէ:



ԴԺՈՒՔԸ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է ՏՂԱՍ

դժոխքը կրակներու մէջ է կ'ըսեն
մենք կրակը տաքնալու
կերակուր եփելու
եւ արդուկելու համար կը դնենք

կ'ըսեն թէ բոլոր մեղաւորները
դժոխք պիտի երթան
սուտ է

դրացի ընկերս սարգիս
թռուցիկս պատռելէն ի վեր
բնաւ մեր տունը չեկաւ

դժոխքը վերն է կ'ըսեն
սուտ է

երկնքի մէջ բան չկայ
երբեմն արեւ եւ ամպ
եւ գիշերներն ալ երբեմն
լուսին եւ աստղեր կ'երեւան

սուտ են
ամէնքն ալ սուտ կը խօսին
եւ մինակ մամայիս խօսքին կը հաւատամ
մամաս բնաւ սուտ չի խօսիր
եւ ամէն օր խօսք մը կ'ընէ
ԴԺՈՒՔԸ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է ՏՂԱՍ

ՕՐԷ ՕՐ

Օրէ օր
օրերուն հետ օրերս
կը մարին-
ցոլքերն ապրումիս:
Կը հալին
Ճիգերն օրերու
յուշիկ յուշիկ-
տենչերն օրերուս:
Կը թափին
չոր թերթերն օրերու...

Օրէ օր
Օրերուն հետ օրերս
կը մարին:
«Պատկեր» 1939



BASINDA 50. YIL

ԱՆՎԱԿԵՆՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ԵՐԳԻՔԻՆ ՏԱԿ ՅՈՒՆԵՆԵԱՆՆԱՆ ՓՅՆՈՒՆ ԶԱՆԳՒՄՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՐԺԱՐԱՆԻՆ ԵՒ ՃԱՆՃԻԿԵՆՆԻ ՆՈՒՆՐՈՒՄ

Կրթ. մասնագիտացված հաստատություններին և ընտանիքներին հարգանքներով և անուշ հիշողությամբ հիշատակում ենք զանազան մեծանուն անձանց, որոնք մեզ հետ միասին եղան հայրենի հողի վրա, որտեղ մենք մեծանում ենք և ապագայում կարող ենք ներդրում անել հայրենի հողին: Մեր հիշողությունները հարգանքներով և անուշ հիշողությամբ հիշատակում ենք զանազան մեծանուն անձանց, որոնք մեզ հետ միասին եղան հայրենի հողի վրա, որտեղ մենք մեծանում ենք և ապագայում կարող ենք ներդրում անել հայրենի հողին:



ТОПЛУМ

AGOS 8

Sahakyan Lisesi 50. yılını kutluyor

İstanbul Etrafında yerleşen bir köyde doğmuş, Ermeni Patrikhanesi'ne ev sahipliği yapmış tarihi evine, Ermeni eğitim kurumları tarihinde de büyük bir geleneğe sahiptir. Bu geleneğin temsilcisi ve İstanbul Ermeni toplumu'nun sahip olduğu beyazının temsilcisi olan Sahakyan Nuryan Kurumunun 50. yıldönümünü bir dizi etkinliklerle kutluyor.



Համայն-ժողովուրդի հետ միասին ներդրումներ են անում հայրենի հողին: Մեր հիշողությունները հարգանքներով և անուշ հիշողությամբ հիշատակում ենք զանազան մեծանուն անձանց, որոնք մեզ հետ միասին եղան հայրենի հողի վրա, որտեղ մենք մեծանում ենք և ապագայում կարող ենք ներդրում անել հայրենի հողին:



Aris

ԵՆՆ-ՆՈՒՆԵՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ԱՆՎԱԿԵՐՏԵՐԵ ԿՐԾԱՅՈՒՅԻՆ ԿԱՐԳԻՄ ՃԱՆՃԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԸ



Մեր հիշողությունները հարգանքներով և անուշ հիշողությամբ հիշատակում ենք զանազան մեծանուն անձանց, որոնք մեզ հետ միասին եղան հայրենի հողի վրա, որտեղ մենք մեծանում ենք և ապագայում կարող ենք ներդրում անել հայրենի հողին:

Sahakyan atletizm şenliklerini Keğam Esayan'a ithaf etti



Sahakyan Nuryan Lisesi'nin kuruluşunun 50. yılı için düzenlenen kutlama etkinlikleri kapsamında yer alan Liseler Atletizm Şenliği 6 Nisan Çarşamba günü Araköy Aslı Çakar Alptekin Spor Salonu'nda yapıldı. Bu yıl ikincisi düzenlenen şenlik, Sahakyan Okulu'nun

beden eğitimi öğretmeni Keğam Esayan'ın anısına ithaf edildi. Uzun atlama, koşu, gülle atma ve bayrak yarışında Getronagan, Pangalo Muhitryan, Esayan, Tiberevank ve şenliğin ev sahipliğini üstlenen Sahakyan Nuryan Lisesi öğrencileri yer aldı. Dostluğun, rekabetin önüne geçtiği oyunlarda katılımcılar, sembolik alın madalyalarla evlerini döndü.

ԱՆՎԱԿԵՆՆ-ՆՈՒՆԵՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ԿՈՂՄԵ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԻՋ-ԼԻՍԵԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԻՈՒԹԵՆ ԶԱՆԳԵՍԸ

ՄԻՋԻՒՆԵԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻ ԽՐԱՌՆՅԱՆՔ

Միջին դասարանական մրցումներին մասնակցող ընտանիքներին հարգանքներով և անուշ հիշողությամբ հիշատակում ենք զանազան մեծանուն անձանց, որոնք մեզ հետ միասին եղան հայրենի հողի վրա, որտեղ մենք մեծանում ենք և ապագայում կարող ենք ներդրում անել հայրենի հողին:



Մեր հիշողությունները հարգանքներով և անուշ հիշողությամբ հիշատակում ենք զանազան մեծանուն անձանց, որոնք մեզ հետ միասին եղան հայրենի հողի վրա, որտեղ մենք մեծանում ենք և ապագայում կարող ենք ներդրում անել հայրենի հողին:



Առաջին մրցանակաբեկը՝ Սարգիս Գրիգորյանը և Աննա Մուրադյանը մրցանակներ ստանալիս: Փառք Մարտիրոսյանի և Սարգիս Գրիգորյանի հետ:

Միջլիսեական Պատմուածքի Մրցում Զօնուած 50ամեակ Սահակեան Նունեան Վարժարանի

Վարժարանիս հիմնարկութեան 50ամեակին առթիւ մեր հինգ լիսեաներու միջև կազմակերպուեցաւ «Պատմուածք մը գրենք» խորագրեալ մրցում մը:

Պատմուածքի նիւթն էր «Մայիտակ երագ մըն էր, որ հողին վրայ կ'աճէր»: Մրցումը կատարուեցաւ Սահակեան Նունեան Վարժարան մէջ 4 Մայիսին: Դատակազմի անդամներն էին Սիլվա Կոմիկեան, Հերմինէ Պէլիօղլու, Մաքրուհի Պ.Յակոբեան, Անի Երամեան, Արամ Կոստանեան: Մրցումի մասնակցեցան 28 աշակերտներ:

Մրցանակաբաշխութեան հանդէսը սարքուեցաւ Սահակեան Սանուց Միութեան Աճառեան սրահին մէջ 23 Մայիսին: Օրուան խօսնակն էր Սահակեանի ուսուցչուհիներէն՝ Օր. Գարին Ազալը:

Մրցումի մասնակից վարժարաններու աշակերտներուն և իրենց հայերէնի ուսուցիչներուն նուիրուեցան մասնակցութեան վաւերագրեր և յուշանուէրներ:

Վարժարանս այս մրցումին մէջ ձեռք բերաւ յաջող արդիւնք մը, որոնցմէ յիշատակութեան արժանի աշակերտներէն մէկը եղաւ 9րդ դասարանի սան Լուսին Տէմիրճին: Գ. մրցանակատրն էր 9րդ դասարանի սաներէն Սէսիլ Հըտըրը: Իսկ Բ. մրցանակատրը եղաւ 10րդ դասարանէն Մէլիս Թաշտէմիրը:

Առաջնութեան մրցանակը իրենց միջև բաժնեցին Սահակեան Նունեան և Կեդրոնական Վարժարանները: Դափնեկիրներն էին Սահակեան Նունեան Վարժարանէն Լինտա Տէմիրճին և Կեդրոնական Վարժարանէն Մարին Պայրամ, որոնց նուիրուեցան ոսկեայ մանեակներ:

Յայտագրի ընթացքին վարժարանիս երգի ակումբը բեմ բարձրացաւ համերգով մը ղեկավարութեամբ Օր. Անիթա Գուրթօղլուի:

Ա. մրցանակատրներու գրութիւնները տողանցեցին պաստառին վրայ պատկերալից դրուագներով, որոնք մեծ հետաքրքրութիւն ստեղծեց ունկնդիրներուն կողմէ:

Այս առթիւ կը շնորհաւորենք մեր սիրասուն աշակերտները:

YAZI ATÖLYESİ



YAZI ATÖLYESİ

Լինա Տեմիրճի



Ա. ՄՐՅԱՆԱՎԵՒՈՐ

ԱՆՈՅՇ ԵՐԱՉ ՍՆՆ ԷՐ ԲԱՄՊԱԿԸ

Գրեց ԼԻՆԱ ՏԵՄԻՐՃԻ
(Սահակեան-Նունեան Վարժարան)

Կարգ մը բաները շատ քիչ կը յիշեմ: Բայց կր ընտանիքս կարօտեամ, կ'աշխատեմ մայրիկիս արձանագրած այդ տեսակերով: Այս առաջ կը արթնցայ, ընտանիքիս ծայրը լսել ուղեցի: Բացի այդ ճայնադրույթիս մէջ մեծ ուղարկեամք եւ կարօտով սկսայ դիտել:

Հայրիկս կը պոռար ինձի. «Լաղէ՛ Սարգիս դեռ շատ գործ ունինք» ըսելով: Վեց տարեկան էի, բայց Հայրիկիս մէջ պոռալը մեր բամպակի արտերուն մէջ անդին-ասդին վաղելուս պատճառ կ'ըլլար: Այդ փոքրիկ ձեռքերովս աշխատելով Հայրիկիս աչքը մտնել կը ջնայի: Երբ բամպակի փուշերը կը մտնէին մորթիս, այդ պզտիկ միտքովս կը ջնայի որ չլամ: Կարգ մը ատեններ Հայրիկս կը տեսնէր ցաւալի վիճակու եւ դադար կուտար գործին: Ես ալ ծառի մը տակ նստած, անձայն-անշուկ կուլայի: Եթէ տեսնէր զիս այդ լալազիս վիճակով, շէր վայելեցնէր իր մէջ հատիկ զաւակին այս պակասութիւնը: Ամէն բանը այնքան ճերմակ էր որ զիմացէն նայող մէկը ուրիշ՝ եւ ինչպէ՛ս պիտի տեսնէր ու հասկնար այս ճերմակութեան միւս կողմը գտնուող դժուարութիւնը:

Ամէն անգամունս այս կարգով աչքերովս կը դիտէի Հայրս, ան իր ամբողջ ուժով կը հաւաքէր բամպակները իր սպիտակ յոյսերը: Հայրիկս սպիտակ երազ մը ունէր՝ զիս մեծցնել, իր բոլոր ունեցածներով լաւագոյն կերպով կեանքի պատրաստել: Ամէն օր այդ սպիտակ երազը քիչ մը կ'անճր: Հայրիկս ստանին անգամ այսքան ուրախ կը տեսնէի: Ձեռքը զանդաղ բայելնով կը մօտենար մեզի: Հայրիկս միշտ կ'ըսէր. «Եթէ սպիտակ երազը զարնու չմեծցնես, ձեռքը սեռութիւն կը բերէ իր քով»: Քանի կը մեծնայի, աւելի լաւ կը հասկնայի այս խօսքը: Հայրիկիս ամէն ծմեռ ապրած այս ուրախութիւնը տարեկարծովս աւելի շատցաւ: Ձեռքը անցած դրամին մէջ մտաւ նուիրեց ինձի: Երբ տարեկարծիս օրը եկաւ, Հայրիկս ինձի բամպակէ բարձ մը պատրաստած էր իբրեւ նուէր: Այդ զիշեր շատ հանդիստ պահեցայ: Մինչեւ տասը տարեկան առաջին անգամ նուէր մը ստացած էի: Ծիշող ըսելով Համար, առաջին անգամ էր որ իմ ջանքովս նուէր մը ստացած էի:

Օր մը երբ Հայրիկս դադար տուած էր ինձի, ես ալ ծառի մը տակ նստած՝ անոր շարժումները կը դիտէի: Հայրս բամպակները հողէն կամաց-կամաց կը զգտնէր: Բաժնած իւրաքանչիւր փունջն ալ մեծ ուղարկեամք կողովին մէջ կը զնէր: Օրէ օր այս շարժումը զանդաղեցաւ: Երբ ինչպէ՛ս ըլլալը հարցնել կը ջնայի, ան խնդալով «Քեզ սպասով կեանք մը շպատրաստած այս երկրէն չեմ կրնար երթալ» կ'ըսէր շարունակ:

Սակայն օր մը մեզի տրուած այդ սպիտակ երազը երկվայրկեաններու մէջ ոչնչացաւ: Մայրիկս Հայրիկիս յանձնելու Համար ձեռքս դաւաթ մը թան տուաւ: Երբ արա Հասայ, տեսայ որ Հայրիկիս անուշ մարմինը բամպակներու մէջ կը պահէր: Այդ օրէն ետք ամբողջ ուժս մայրիկիս նուիրեցի: Հիմա ան Հայրիկիս ձգած սպիտակ երազին մնացեալ մասը շարունակել սկսած էր: Քանի իմ ուժս ետեւը կը զգար, աւելի ուրախութեամք կ'աշխատէր մեր սիրելի արտին մէջ: Կը յիշեմ նաեւ որ օր մը որպէսզի ինքնամտած զգամ ես զիս, խնդրեց որ արտին՝ գործերը իրեն պատմեմ: Ես կարգ մը ատեններ ալ կը տեսնէի թէ երկար ժամանակ աչքերը զգայի հեռուն յառած անձայն անշուկ կը նստէր: Կը վախնայի, որովհետեւ ես ալ լաւ չէի:

Ինչ որ ըլլար, մայրիկիս Համար օտքի կեանք կը ջնայի: Մինչեւ որ այդ սպիտակ երազի աշխատութիւնը մայրս ալ առաւ տարաւ Հայրիկիս քով



եւ ես տասնընց տարեկանիս մնացի առանձին: Այդ պզտիկ արտին ամէն մէկ անկիւնը Հայրիկիս յիշատակներովը, իսկ այդ անձայն տան մէջ մայրիկի մը տաքութեան զուրկ մենցայ ես: Հիմա այդ բամպակները Հաւաքած ամէն ատենս ափերուս մէջ ցաւի տեղ միմիայն Հայրիկիս սպիտակ երազը իրականացնելու Հպարտութիւնը կը զգամ: Եթէ երկիրէն դիս կը դիտէ, արդեօք կը տեսնէ՞ թէ մէկ Հատիկ զաւակը նոյնպէս կը շարունակէ իր ձգած գործը:

Այդ պզտիկ ձեռքերուս միտումն ոչ մէկ փուշէն անհանգիստ եմ: Ընդհակառակը, Հայրիկիս ինձի տուած իւրաքանչիւր խրատներուն պատճառաւ «Աղէկ որ Հայրիկիս

զաւակն եմ կ'ըսեմ»: Ամէն մէկ վայրկեանս պիտի ըսեմ, մինչեւ որ իմ սպիտակ երազս ալ վերջանայ: Քսան տարի ետք...

Ժամանակը շատոնց անցած էր: Բացի սպիտակ յոյսերէ ոչ մէկ բանը նոյնն էր հիմա:

Գրեթէ երկու ամիս առջը երբ գործարանէն կը վերադառնայի, արունքն եկող ծայրերը զիս ուղեցնել զգայի այդ կողմ: Դժ մ յանդիման եկայ մօտադրացիս սասը տարեկան տղու մը Հետ: Ան մեծ ուրախութեամբ բամպակներով կը խոսար: Երբ տղան ճանչցայ, իմ պզտիկութիւնս տեսայ անոր պզտիկ աչքերուն մէջ: Դժուարութիւն մը տեսած ատեն կը վախնար, բայց յայտնի չէր ընել իր զգացումները: Սոսան ատեն բերնէն փախցուց. «Պարտաւոր եմ կրթութեանս եւ քորիկիս Համար աշխատել»: Այդ զիշեր շատ խորհեցայ: Անոր երազ մը պիտի նուիրէի, սիրելի Հայրիկիս ինձի տուած սպիտակ կեանքի մը նման:

Յաջորդ օր երբ մտածումս իրեն բացատրեցի, իր տարիքին տուած յուզումով ընդունեց իրեն արուած այդ սպիտակ երազը: Երբ աշխատելէն կը յոգնէր, փայլուն աչքերով կը նայէր շրթունքիս, որ զինքը ուրախացնեմ մէկ բառովս. «Այդ կը տեսնուի՞ք»: Կարճ ժամանակէ ի վեր կը ճանչնայի զինքը, բայց օրէ օր ան կը զարմանցնէր զիս խելացի վարմունքներով:

Օր մը երբ բամպակները գործարանս պիտի տանէի, որպէսզի պարսպ չեկնայ, խնդրեցի իրմէ որ ան արտին միւս կողմը գտնուող բամպակները Հաւաքէ: Շուտաւ կը նախէր ինձի: Աչքերը ինձի կը նայէին, բայց այդ պզտիկ մտքին մէջ արդեօք ինչեք կ'անցնէին, հոգ կ'ընէի: Գործատեղիէ վերադարձիս, քով աղջիկ մը կար: Բաներ մը կը բացատրէր անոր: Երբ քիչ մըն ալ մօտեցայ, լսածներուս զիմաց սառչեցայ:

«Բամպակները հողէն կամաց-կամաց բաժնէ՞» կ'ըսէր ան: Երբ աղջիկը կը շարունակէր աշխատիլ, ան առանց ստիժ տալու՝ «Նո՛ւ, ո՛չ» կ'ըսէր պոռալով: Ի՛նչ պիտի ընէի, իրեն տրուած գործը ուրիշին տալ ուղիւնս պատճառաւ պիտի բարկանայի՞: Անշուշտ ո՛չ:

Քովը զացած ատենս սորվեցայ որ մանչուսն քորիկն էր այդ երիտասարդուհին: Անոնք ալ առանձին էին ինձի պէս: Անոնց կեանքն ալ դժուարութիւններով լեցուն էր: Ուղեցի այս երկու որրուկին տէր կանչելու եւ այդպէս ալ ըրի: Աղջկան առաջարկեցի որ իմ քովս աշխատի, իսկ պզտիկն ալ արձանագրեցի զպրօք:

Երջանիկ էի կարօտեալներուն օգնելով: Ընտանիքս ժառանգ ստացած զգացումներով բարոյացուցաւ կեանք մը կը վարէի: Երբ հեռուէն Հանդիստ պրտով կը դիտէի բամպակներու ճերմակ աշխարհը, ո՛չ դժուարութիւն, ո՛չ ալ յուսահատութիւն կը զգայի: Միմիայն այս յոգնած աչքերովս կը փնտրէի իւրաքանչիւր արգելիքն ետեւը պատուտող իմ յոյսերը, որոնք միշտ գորաւոր կը պահէին զիս:





Բ. ՄՐՅԱՆԱԿԱՌՐ

ԿԱԿԱՉԻՆ ՀՐԱՇԻՐ

Գրեց ՄԵԼԻՍ ԹԱՇՏԵՄԻՐ (Սահակնան- Նունեան Արժարան)

աղջիկը ծնաւ, որուն անունը Երջան գրին: Երջանը շատ աղուոր էր: Ունէր երկար սեւ մազեր, մաշրիկին եւ հայրիկին պէս կապոյտ աշբեր: Այս աղուոր երեսը դայն շատ սիրուն կ'ընէր: Իր արարին հետ այ շատ լաւ կը համաձայնէր: Ան արդէն ամէն ատեն տան մէջ գտնուող անհատներուն երջանուութիւն կուտար իր անունին պէս: Մաշրիկը եւ հայրիկը, Տանիկը եւ Երջանը իրարմէ չէին զատեր: Այս տան մէջ այլեւս իշխան եւ իշխանուհի մը կ'ապրէր:



էր: Մաղիկները Երջանին համար բուժման միջոց էին:

Երբ հիւանդութիւնը որոշապէս հասկցուեցաւ, Երջան հայրիկէն ուղեց որ ան իր ամէնէն շատ սիրած ծաղիկներէն մին եղող սպիտակ կակաչի տխերը դնէ: Այդ օրուան զիշերը հայրիկը ձեռքին սպիտակ կակաչներու սերմերով եկաւ: Առաւօտուն արթննալուն պէս տղիները անկիւռ համար պարտէզ էլան: Այդ օրէն սկսեալ Երջանիկ ամէն զիշեր նոյն երազը տեսնել սկսաւ: Երազին մէջ կը տեսնէր որ պարտէզի մէջ անկուած տխերը մեծցած եւ աղուոր կակաչներու վերածուած էին: Միւս կողմէ կը տեսնէր որ ինք իր ընտանիքին հետ կը խաղար: Մաղիկները կամաց կամաց կը բացուէին: Երջանն այ

Օր մը Երջանը հիւանդացաւ: Տարութիւն ունէր: Մաշրիկը ինչ որ այ ընէր, տարութիւնը փոխանակ իջնուէր, կը բարձրանար: Առաւօտուան շարժուելով հիւանդանոց տարին Երջանը: Հուն դանազան քննութիւններ կատարեցին, սպասեցին ու սպասեցին: Երջանի արեան քննութիւններուն արդիւնքները ցոյց կուտային որ ան բաղցկեղ էր: Շատ կարճ ժամանակ ունէր ապրելու համար: Ան մնացած ժամանակը երկարելու համար զարմանում տեսնել սկսաւ: Այս զարմանումները Երջանին փոքրիկ մարմնին համար շատ ծանր կուգային, որովհետեւ ան տակաւին հինգ տարեկան էր: Մաշրիկը եւ հայրիկը իրենց զակիկն համար շատ կը յուզուէին: Որովհետեւ իրենց աղջիկը անճար հիւանդութեան մը ձեռքն էր:

կ'աղկէնամ կը կարճէր եւ շատ զուարթ էր: Յուզումով կը դիտէր ծաղիկները եւ աւելի շատ կը սիրէր զանոնք: Յովսէփը եւ Մարիամը երբ կը տեսնէին այս տեսարանը, շատ կը յուզուէին իրենց աղջկան համար:

Այս միջոցին ամէն օր հիւանդանոց կ'երթային: Երջանը այդ ծանր զարմանումները կը տեսնէր, բայց իր վիճակին մէջ փոփոխութիւն մը չկար: Տան մէջ աշխատող սպասաւորներն այ շատ մտահոգուած էին Երջանին վիճակին համար: Շատ կը սիրէին դայն: Երջանը քիչ մըն այ կարեւոր էր տան բոլոր բնակիչներուն համար, որովհետեւ ան 15 տարի վերջ եկած էր աշխարհ: Այսինքն մայրը

եւ հայրը, նոյնիսկ սպասաւորները, 15 տարի սպասած էին: Հիմա այ անճար հիւանդութեան մը ձեռքն էր այդ անուշիկ, փոքրիկ աղջիկը: Մաղիկները բացուել սկսած էին: Երջանը երեք-չորս բժիշկի տարին, բայց անոնք այ բան մը չկրցան ընել:

Վերջին անգամ իրենց բախար փորձեցին: Այդ բժիշկը բաւ որ օսկրածուծի փոխադրութեան պէտք ունին եւ եթէ այս փոխադրութիւնը կարենան կատարել, Երջանը նորէն կը շահի իր առողջութիւնը: Այս խօսքերը յոյս մը տուին անյոյս ընտանիքին: Մարիամ եւ Յովսէփ ամէն ինչ կ'ընէին իրենց աղջիկը կրկին շահելու համար:

Անմիջապէս քննութիւններ կատարեցին, բայց այդ քննութիւններուն արդիւնքը զիչ էրաւ: Թէ՛ Մարիամին եւ թէ՛ Յովսէփին օսկրածուծներ չէին յարմարը Երջանին: Իր արարին Տանիկին օսկրածուծը Երջանին յարմարեցաւ: Այս ինչ մեծ բախտ մըն էր Տանիկը իրենց բուն զաւակնանգամ չէր, բայց կենսը պիտի տար իր քրոջ: Արդիւնքներուն զարմանալով կը նայէին, այս արդիւնքները իրենց բարի մտեցումին պատասխանն էր: Շուտիկ մը փոխադրութիւնը կատարեցին եւ տուն վերադարձան:

Տան վրայ պարտող սեւ ամպերը գացած էին: Տան անհատները շատ զուարթ էին: Մաշրիկը եւ հայրիկը այլեւս իրենց աղջկան երեսը անճար նայելու ստիպուած չէին: Մաղիկները բոլորովին բացած ատեն Երջանը նորէն շահած էր իր առողջութիւնը: Մարիամը եւ Յովսէփը այս զեղբէն վերջ շատ ուրախացան եւ որպէսզի իրենց աղջկան երեսը խնդայ, պարտէզի կէսն աւելի տարածութիւնը սպիտակ կակաչներով լեցուցին:

Երջանին զարմանումը երկար տարիներ տեսց, բայց ան իր տարեկիցներէն չէտուցաւ: Ուսանեցաւ եւ կենսաշինութիւն մը եղաւ: Այլեւս մէկ նոյստակ ունէր, իր հիւանդութեան զարման եղող զեղբոր զտնել: Գալով Տանիկին, ան այ շատ մեծ գործուար մը եղաւ եւ իր շահած զարմանումով զիւր մը բացաւ որը տղոց համար: Իր քրոջ հետ զատաւանդեցին այդ զիւրդն մէջ գտնուող աղոց:

Այլեւս թէ՛ Տանիկին եւ թէ՛ Երջանին կեանքին մէջ բուսած էին ճերմակ կակաչներ, լաւ բնտանիքի լաւ հողին վրայ ինկած:



YAZI ATÖLYESİ

Սեսիլ Հրտրը

9 Գ դասարանին

3

«Ես ո՞ր սխալ ըրի...»

«Ա՛հ, Նաղաշ, ո՞ր չըրիր որ...»

Բարկությունքամբ խոնարհեց գլուխը. «Ես ասանկ ըլլալը չէի ուզած»:

«Ո՛չ, դուն, ճիշդ ու ճիշդ կ'ուզէիր որ ասանկ ըլլար»:

Ամէն մարդ մաքուր սրտով կը ծնի: Բայց շուրջինները այդ մաքուր սիրտը կտոր կտոր կ'ընեն և քար մը կը դնեն անոր տեղը: Ոչ ոք պատասխանատուութիւն կ'առնէ... Անոնց համար հոգ չէ թէ անձը կը կորսուի իր խաւարին մէջ: Մտուերներուն մէջ երկու փայլուն լոյսերն ալ կը մարին և միայն խաւարը կը մնայ: Միայն սպիտակ երազները կրնան լոյս սփռել խաւարին վրայ:

«Պատրաստ ե՞ս»:

«Կը խնդրեմ»: Աղաչող աչքերը արցունքներով լեցուած էին:

«Եթէ կը վախնաս անցեալէդ, ուրեմն ինչո՞ւ բան մը ընելէ առաջ երկու անգամ չխորհեցար Նաղաշ»:

«Եթէ գիտնայի որ ասանկ պիտի ըլլար...» Երեսին ձեռք մը դաչեցաւ: Նաղաշ աչքերը տնկած կը նայէր «իրականութեան»ը, որ հիմայ կեցած էր իր առջեւ, աչքերը գոցած և ամէն մէկ վայրկեանին բան մը ըսելու պատրաստ:

- Բայց, Նաղաշ, չէիր կրնար գիտնալ, ոչ ոք կրնայ գիտնալ: Իրականութեան նեղուած շունչը կ'ըսէր որ ատենը եկած է սկսելու:

- Սկսինք:

Մեղքեր և Մեղաւորներ

Պզտիկ տղայ մը կու լայ փողոցին մէջտեղը: Զայն շրջապատող հետաքրքիր աչքերը կը ջանան հասկնալ եղելութիւնը: Մայրը շփոթած քովը կը վազէ: Ոտքին աննշան վերքը տեսնելով հանգիստ շունչ մը կը քաշէ: Մայրը սիրով կը գրկէ գաւակը և կը քալէ դէպի տուն: Պզտիկ տղան այն ատեն կը հասկնայ ցաւին իմաստը:

Ցաւին մեծութիւնը կը զարմացնէ տղան: Ընկերը հրած և գետին նետած էր զինք: Ա՞յս էր իր քաշած մեծ ցաւին պատճառը:

Տղան կը հասկնայ նաեւ գէշութեան իմաստը: Գէշութիւնը այլևս պիտի չլքէր իր սիրտը:

Ընտանիքին մէկ հատիկ գաւակն էր: Տարիներով գաւակ չէին ունեցած: Նաղաշը ծնելէ ետք ազատ էին շրջակայքի ճնշումներէն: Ի՞նչ էր այս գաւակ ունենալու փափաքը: Ինչո՞ւ գաւակ ունենալը այսքան կարեւոր էր: Գէշութիւններով և նեղութիւններով լեցուն այս աշխարհին մեղաւոր մը եւս բերած էին, ասո՞ր համար կ'ուրախանային: Կարեւոր չէ:

Նաղաշը ընտանիքին մէկ հատիկ գաւակը ըլլալուն համար շատ շփացած էր: Ան միջակ գեղեցկութեամբ արտաքին երեւոյթի և միջակ խելքի տէր էր, բայց հակառակ ասոր ընտանիքը զինքը Աստուծոյ գաւկի տեղ դրած էին: Ոչ մէկ ձիրք ուներ, ոչ ալ բան մը ընելու տենչ: Հաւանաբար այս պատճառաւ կը նախանձէր իր ընկերներէն:

Դպրոց սկսած տարին նոր ընկերներ ունեցաւ: Կը խաղար անոնց հետ. ամէնէն շատ գնդակ խաղալը կը սիրէր: Մտերիմ ընկերը օր մը նոր գնդակ մը բերած էր դպրոց: Նաղաշ սաստիկ նախանձած էր: Գաղտնօրէն պայթեցուցած էր գնդակը և պատիժէ վախնալով յանցանքը ուրիշի վրայ նետած: Վախկոտ և նախանձոտ էր Նաղաշ:

YAZI ATÖLYESİ

Սեսիլ Հրտրը

9 Գ դասարանին

.....
-Եւ առաջին մեղքդ գործեցիր, ըսաւ
Իրականութիւնը:

-Կատա՞ կ'ընես, պզտիկ տղայ էի այն
ատեն: Հեզնական խնդուք լսուեցաւ:

-Տարիքը կարեւորութիւն չունի
Նաղաշ, նախանձը մեծ մեղք է: Այդ մեծ մեղքը քեզ
ասանկ ըրաւ:

Խօսքերուն ճշմարտութենէն Նաղաշ կը
զայրանար:

-Կը բարկանա՞ս: Սակայն կը կարծեմ
թէ մեղք գործելը շատ կը սիրես: Ինչ որ է
շարունակենք, ըսաւ դիմացինը:

Նաղաշ պզտիկ տղայ մը չէր այլեւս: Ան
կրնար լաւը գէշէն զանազանել: Լաւը միշտ
ճերմակ և մաքուր էր: Գէշը սեւ և աղտոտ էր: Լաւ
ուրեմս, մոխրագոյնը ի՞նչ էր: Մենք կաղապարուած
այս վճիռներով մեծցած էինք, բայց ասոնք ալ
վերջ մը ունէին: Մեզի ոչ ոք բացատրած էր
մոխրագոյնին իմաստը, ոչ ոք համարձակած
էր: Նաղաշ ասանկ բաներուն կարեւորութիւն
չէր տար: Ան կ'ընէր իրեն ինչ որ սորվեցուցած
էին, յետոյ մտքին մէկ անկիւնը կը նետէր զանոնք:

Լիսէի դասերը իրեն համար պարապ
բաներ էին: Մայրը կ'աղաչէր, բայց ան շարունակ
դասերէն կը փախչէր: Նաղաշը ծոյլ էր:

.....
Ընտանիքը աղքատ էր: Ծնողքը քիչով
կը գոհանային, բայց զաւակնին շռայլ
մեծցուցած էին: Ան միշտ աւելի շատը
կ'ուզէր: Նաղաշը գոհացնելու համար հայրը
երկու տեղ կ'աշխատէր, իսկ մայրը տունը
պատրաստած կէրակուրները ծախելով դրամ
կը շահէր: Ան կարեւորութիւն չէր տար ծնողքին
աշխատանքներուն: Նաղաշ գէշ ընկերներ ունէր.

անոնց աչքը մտնելու համար ընտանիքին շատ
մեծ փասաներ պատճառած էր: Նաղաշը ծակաչք
էր:

- Առաջ կը կարծէի, որ շատ ալ գէշ մէկը չես,
բայց յետոյ...

-Ո՛չ, ես գէշ մէկը չեմ: Ամէն մարդ սխալ կրնայ
գործել, անանկ չէ՞:

Չէր ուզել ընդունիլ ճշմարտութիւնը:

-Կը ցաւիմ Նաղաշ, բայց դուն միմիայն
չարութիւն կը պարունակես:

Վերջին յոյսն ալ մարած էր Նաղաշին
աչքերուն մէջ:

-Շարունակենք:

.....
Նաղաշ միջակ խելք ունէր, բայց կրցած էր
լաւ համալսարան մը շահիլ. կը հաւատար թէ
կեանքին մէջ ուրիշ արգելքներ պիտի չունենար
այլեւս:

Նաղաշ շատ յաւակնոտ էր. ան դրամ ծախսելու
մոլի եղած էր. որքան շատ դրամ ունենար այնքան
միամիտ կ'ըլլար:

Համալսարանի աշակերտի մը այսքան դրամ
ունենալը անիմաստ կը թուէր, յատկապէս ինչպէս
շահիլը եթէ խորհինք:

Ան չէր խորհէր իր ըրածներուն արդիւնքը: Գէշ
ընկերներով և ընկերուհիներով կ'ուտէր, կը խմէր
մինչեւ կէս գիշերներ: Կեանքին մէջ ամէն բան
դէպի գէշ կ'երթար. ոչ մէկ ճերմակ փացած էր իր
անցեալէն:

Ձեռքերը սեփսեւ և աղտոտ՝ որո՞ւ որ դպչի
կարծես դպչածն ալ սեւի կը դառնար: Անկասկած
այս աղտոտութենէ փախուստ մը չկար, որ ան
արդէն չէր ուզէր փախչիլ:

Նաղաշը այս վիճակի բերողները իր
ընկերներն էին: Եթէ չխմէր, անոնց ընկերը

YAZI ATÖLYESİ

Սեսիլ Հրտրր

9 Գ դասարանին

չէր. եթէ չուտեր անոր ընկերութեան պէտք չունէին: Ընկերներէն գէշ սովորութիւններ ու վարժութիւններ ձեռք ձգած էր: Կը կարծէր թէ այս ձեռով աւելի կը բարձրանար իր հեղինակութիւնը, բայց ընդհակառակն աւելի միամիտ կը դառնար:

Այս գէշ սովորութիւնները Նաղաշին վախճանը եղան:

«Նախանձը, բարկութիւնը, ծուլութիւնը, ինքնահաւանութիւնը, որկրամոլութիւնը, ծակաչքութիւնը և սեռային ցանկութիւնը... Եօթը մահացու մեղքերն են: Դուն ալ շատ լաւ բաներ կար-ծելով հետեւած ես անոնց»: Նաղաշ ձայն չէր հաներ:

«Չեմ ուզեր:»

«Աւելի բարձր ձայնով պէտք է խօսիս Նաղաշ»:

«Չեմ ուզեր, կը հասկնաս, չեմ ուզեր: Ես պէտք չէր որ մեռնէի: Միայն գէշ կողմերս տեսնուած են. իրականութեան մէջ ես...» Ձայնը երթալով կը մարեր:

«Իրաւունք ունիս, բայց լոյսդ շատ թոյլ է և չի բաւեր հոգիիդ խաւարը լուսաւորելու: Ես գոհ պիտի լինայի եթէ մոխրագոյն ըլլայիր, բայց դուն սեւ ես»:

«Հապա ընտանիքս ի՞նչ պիտի ըլլայ: Վստահ եմ, որ շատ յուզուած են մահուս պատճառաւ»: Հեզնական խնդուք մը ես...»

-Կը սխալիս, կարծածիդ չափ չեն յուզուած:

Ապշած կը նայեր...

-Նաղաշ՝ դուն ընտանիքիդ մէջ աճող սպիտակ երագ մըն էիր, բայց դուն այս երագը մղձաւանջի մը վերածեցիր:

Աչքերը լեցուեցան, յետոյ հեկեկանք...

-Հապա դո՛ւն, դո՛ւն ո՞վ ես:

-Ես դուն եմ Նաղաշ...

Հասկցած էր, աչքերը գոցուեցան:

-Հարցաքննութիւնդ վերջացաւ: Ասկէ ետք

անոնք պիտի որոշեն, ըսաւ և սիրտ այրող գոջումով մը, որ այլեւս ոչ մէկ կարելութիւն ունէր, գլխահակ ուղղուեցաւ դէպի խաւար ու անյայտ պարապութեան:





YAZI ATÖLYESİ

Yeraz Çağlayan
12 - B

YAZI YAZARKEN

Arkadaşlar yazı yazmaktan korkmayın. Tabi yazı yazmanın başlıca kuralları var, onları da sakız gibi çiğneyemezsiniz ki canım! Olur, mu hiç! Şimdi şöyle bir koyacaksın sayfayı önüne. Hissedeceksin sayfayı, çek bakayım iyice içine! Aferin evladım. İyice bir dokun, pürüzsüzlüğünü hisset. Şimdi tıka bakayım kulaklarını, duyma kendinden başka kimsecikleri, he eğer annen gel kızım/oğlum diyorsa salisesinde bırakıyorsun. Bozuyoruz yoksa. İnsanlar hakkında ne derse desin, ilk onların dediğini tat ve düşün. Kendine dön sonra. Kendini değiştir demiyorum. Olabildiğince mantıklı davran ama. Aman hata yapmayım diye uğraşma, çünkü her şeyde hata vardır, Havva bile yanlış meyveyi yemeseydi burada değildik, o yüzden rahat ol!



YAZI ATÖLYESİ

Nadin Agopyan

12 - B

ŞİİRİN ADABI

Elbette her şeyin bir adabı vardır. Her yiğidin bir yoğurt yiyişi aynı olmaz. Edebiyatta da bu yoğurt yiyişi değişir. Şiir, öykü, hikâye, deneme hepsi birbirinden farklı teknikle yazılır.

Şiir yazmak kolay iş değildir, bilirsiniz, ama kimse şiir yazamaz diye bir şey yoktur. Şiir yazmak için hayal gücü, onu sözcüklere dökülebilmek, vermek istediğimiz mesajı doğru tespit etmek, kullandığımız imgeler, uyumu yakalamak gerçekten zordur. Bunların yanı sıra okuyucuda kendi duygularımızı hissettirebilmek, yalnız olmadığını ona ispat etmek en mühim olaydır. Yalnız olmadığımızı bilmek hoşunuza gider mi?

Kimi zaman olmayan bir olayı anlatmak, yaşanmış izlenimi vermek büyük çaba ister. Bunu Yapabilen usta şairlerimiz oldu, umarım olmaya da devam eder. Bu şairler bu şiirleri öyle kolay yazmadığını hatırlatmak gerekir. Bir kelime için yıllarca için yıllarca düşünen şairlerimiz var. Dönemimizde usta şair olmak, adımızı duyurmak zor. Bu kadar başarılı şairlerden sonra kim okur ki bizi diye düşünenlerimiz var, biliyorum ve bazen bende böyle düşünmeden kendimi alıkoyamıyorum. Hep acemi şair olarak kalacağız diye düşünsek de en usta şairlerin içinde bile acemi bir şairin olduğunu düşünüyorum. Yoksa bu yazdıkları şiirler bu kadar çok olmazdı. Ne kadar usta olursanız olun içinizde hep bir acemi şair kalması dileğiyle...



NADİN AGOPYAN 10.05.2015

